

ընդհանուր միջինը ամենաբարձրն է: Պատմական՝ Պատմության շաղկապ, Եկեղեցու, Ընդհ. Ազգայն. Փրկարանական և Ս. Գրական. Առնչ. ամենուրեք միջինին բարձրագույնը: Թուրքական կամ՝ թուրքականություն, գրքական և երկրաչափական, առնչ. միջիններուն ընդհանուր գումարին բարձրագույնը:

Նույնը պիտի ստանայ նաև վարքի մէջ պատշաճ հանդիսացողը:

Զ. Պարզապատկերում եւ մեղաւարտութիւն. — Բնութիւնը նախնաւոր և գեղեցիկին հաշակը զարգացնելու մտքը, վարժարանէն ներս մասնաւոր զարկ տրուած է նաև պարտիզամշակութեան, գլխաւորութեամբ Փոխ-Տեսուչ Բարեշնորհ Գեորգ Աւագ Սարկաւազ Գրգորեանի: Պարտիզին ածնանքը բաժնուած են սղոց գրեթէ հաւասարապէս, և իւրաքանչիւրը պատասխանատու է իր պարտիզի բարձր զարգացման և մաքրութեան: Այս մարտի մէջ մասնաւոր ուրիշ, եռանդ և աշխատանք թափած է ու կը թափէ Տիրացու Գեորգ Սրկ., աւելնէն աւելի նախաձառնողներն աշխատելով, Տեսութեան կողմէ կ'արժանանայ մասնաւոր մրցանակի: Նշնպէս մեր ձեռնարկը ուրարակիր Արամ պապա Սէրայտարեան մասնաւոր հաջածութիւն ցոյց կուտայ մեղաւանդի հանդէպ, և արժանի է մեր շնորհակալութեան:

Է. Առնիք կեանք. — Վարժարանէն ներս, Փոխ-Տեսչին կարգադրութեամբ նշանակուած են ամէն ճիւղերու պատասխանատու վարիչներ: Գրադարանագետ, տնտեսագետ, խաղաղա-նապետ, շարագետ, մաքրողներ (նիւթաւոր, տնտեսարան և գաւառաւոր), զանգակահարներ, և շնորհաւորներն իւրաքանչիւրը կը կատարէ իր պարտականութիւնը առանց թերացումի:

Ուստի փակելով մեր այս տարուան ամսվերի հանդիսութիւնները, պիտի խնդրէ Ձերք Սրբալուծիչներն և Պատուարժան Միաբանութեանէն, որ տայիք Ձեր Հայրական օրհնութիւնները պաշտօնէութեան և ուսանողութեան, որպէս ի նշան ջաշայելութեամբ այս օրուան խաղաղութեան, յատկապէս աւելի եռանդուն ոգիին գործի:

Ձայս յատուցանելով Ձերք Բարձր Արքայապետութեան

Մատչիմ է համարյւր Ս. Անյոյ
Թանարն աղթակից

ՀԱՅԿԱՋԱՌԻՆ ՎՐԻ. ԱՐԱՄԱՄԵԱՆ
Տեսուչ Ժանգ. Վրժ. և Ընծայարանի

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Է. Ե. Ա. Գ. Ի. Ն. Ե. Ի.

Երուսաղէմ, 2 Մայիս 1953

Սենեկապետ

Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորին Յորդանանի Աման

Կր խնդրեմք Ձերք Վսեմութեանն որ բարեհաճի հաղորդել Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին մեր ջերմ շնորհակալութիւնները եւ խորին զգացմանց հաւաստիք իր թագադրութեան բարեբասիկ օրուայ առթիւ: Կ'աղօթեմք Մրբաւորեաց մէջ իր արեւատուքեան եւ երջանկութեան ինչպէս նաեւ մեզի համար սիրելի Հաւիմական Արքայական ընտանիքին՝ որ ընդմիջ օրհնուած է Տիրոջմէն:

ԵՂԻՇԷ ԱՐԳԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Պատրիարքական Տեղապահ
Առաք. Ս. Արքուդյն Երուսաղէմի

Արմենի Ամանի, 3 Մայիս 1953

Գերաւոր

Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Տերտերեան

Պատր. Տեղապահ Ս. Արքուդյն
Երուսաղէմ

Նորին Վեհափառութիւն Թագաւոր իր շնորհակալութիւնները կը յայտնէ Ձեզ Ձեր ազնիւ մաղթանքներուն ու շնորհակալութիւններուն համար:

Սենեկապետ
Հաւիմական Պալատի

Երուսաղէմ, 2 Յունիս 1953

Գերբերարքի Արքեպիսկոպոս

Լոնտոն

Հանեցեք հաղորդել մեր յարգալիք եւ սրտազգած շնորհակալութիւնները Ն. Վ. Երեմիական Բ. Թագուհիին՝ իր թագադրութեան բարեբասիկ առթիւ: Կ'աղօթեմք Մրբաւորեաց մէջ իր երկար ու երջանիկ կեանքին համար՝ ի փառս Բրիտանական ազգին եւ Կայսրութեան:

ԵՂԻՇԷ ԱՐԳԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Պատրիարքական Տեղապահ
Առաք. Ս. Արքուդյն Երուսաղէմի

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եբ. 30 Մայիս. — Է. or Նոգ. : Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայրա՝ վանքի տանիքը : Ս. Նոգիին չուրիբուած մատարան մէջ, ժամաբարն էր Նոգ. Տ. Վարուժան Անդալ Գապարանեան :

● Կիր. 31 Մայիս. — Սկիզբն ճարտարան կիրակից եւ Տոմ եղիայի մարգարէին : Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարի մեր Գողթթայի վերնայարկ մատուռին մէջ, ժամաբարն էր Նոգ. Տ. Պարբե վրդ. Վրթանէսեան :

— Կ. վ. Ս. Նուրիսիանց նախատեսը պաշտուեցաւ Ս. Ներշտակապետ, նախագահութեամբ Գեր. Ս. Սուրբ. Ս. Եպս. Գեմանեանի :

● Բշ. 1 Յունիս. — Տոմ Ս. Կուսմանց Նոխիսիանց : Ի Ս. Ներշտակապետ առաւօտեան ժամերգութիւնէն ետք մատուցուեցաւ Ս. Պատարազ, Եկեղեցոյ առանդատան : Ս. Նուրիսիանցի մատարան մէջ, ժամաբարն էր Նոգ. Տ. Զաւեն Արդ. Զինչիկեան : Զինչի պաշտամանց, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ վանուց տեսչարանը : Տեսուչ Նոգ. Տ. Վարուժան Արդ. Գապարանեանի մօտ :

● Ուր. 5 Յունիս. — Վաղուան նախատեսը կանդիսաւորապէս պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողոսեանի :

● Եբ. 6 Յունիս. — Ս. Գր. Լուսաւորիչ (Ենի վիրապէն) : Ս. Պատարազը մատուցուեցաւ Սուրբ Յակոբեանց Մայր Տանարի Ս. Ստեփանոս մատարան մէջ, Ս. Գր. Լուսաւորչի չուրիբուած խորանին վրայ : ժամաբարն էր Նոգ. Տ. Միւռու Վրդ. Կրիկեան :

— Վաղուան նախատեսակը կանդիսաւորապէս պաշտուեցաւ Մայր Տանարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Զոր Ըստ սովորութեան, յետ նախատեսակի երգուեցաւ «Տէք Ողորմեայ» :

● Կիր. 7 Յունիս. — Տոմ Ս. Էլմամցի : Լանդիսաւոր Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանարի Աւագ Խորանին վրայ : ժամաբարն էր Նոգ. Տ. Յակոբ վրդ. Վարդանեան : Ս. Պատարազի ընթացքին կատարուեցան. Լայրապետական մաղթանք վան Ս. Էլմամցի, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Զոր :

● Կիր. 14 Յունիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարի կայապատկան Բ. Գողթթայի վերնայարկ մատուռին մէջ, ժամաբարն էր Նոգ. Տ. Զաւեն Արդ. Զինչիկեան :

● Ուր. 19 Յունիս. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան կանդիսաւոր նախատեսը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ նախագահութեամբ Գեր. Տ. Սուրբ Ս. Եպս. Գեմանեանի :

● Եբ. 20 Յունիս. — Ս. Գրիգորի Լուսաւորչի (Գիւն Եկեղեցոյ) : Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Մակարայ նոպարան մատուռին մէջ, ժամաբարն էր Նոգ. Տ. Վարուժան Անդալ Գապարանեան :

● Կիր. 21 Յունիս. — Մեծի Տանն Կիլիկիոյ Երանշնորհ Տ. Տ. Գարեգին Ա. Վեհ. Կաթողիկոսի մանուան տարելիցին առթիւ, Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ մատուցուեցաւ եղիսկոպետական Ս. Պատարազ : Ժամաբարն էր Կեր. Տ. Յարութ Ս. Եպս. Գեմանեան, որ «Հայր մեր»-էն առաջ քարոզեց, ներքողը ընելով պատուական երգերականներ, զրուստելով նոյնատեան իր բաղձապահ ու բարձրորէն զնահատուած արժանիքները : Յետ քարոզի, Կեր. Տեղապահ Ս. Զոր նախագահութեամբ, կատարուեցաւ մանաւոր հոգեւանդատեան պաշտոն՝ կանգուցեալ Վեհ. Կողմայն ի հանդիսատէ :

● Դշ. 24 Յունիս. — Երեկոյեան ժամերգութիւնն ու Թարգմանաց հանդիսաւոր նախատեսը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Զոր :

● Եշ. 25 Յունիս. — Ս. Թաղմանց Սահակայ եւ Մերապայ (Տոմ ազգային) : Լանդիսաւոր Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Աւագ Խորանին վրայ : ժամաբարն էր, ըստ ընդհանուր սովորութեան, Ս. Թ. վարժարանի տեսուչը՝ Նոգ. Տ. Կիրակ Սեղալ Գարիկեան : «Հայր մեր»-էն առաջ, Գեր. Տեղապահ Ս. Զորը նախագահեց Ն. Ս. Ս. Տ. Գեորգ Զ. Վեհ. Կաթողիկոսի օծման ճրդ տարեգարմին առթիւ կատարուած շնորհապետական Մաղթանքի արարուածութեան, իսկ «Տէք աղորմեայ»-էն առաջ քարոզեց, պանծացեալով երգւած մեծ Թարգմանիչ սուրբերուն անմահական յիշատակը : Յետ Ս. Պատարազի կատարուեցաւ մանաւոր հոգեւանդատեան պաշտոն Կիրակայի-Նիւրպէկեանի, Տիգրան Գեորգեանի, Լայր Գալուստեանի, Աթիւրեանի եւ Մանուկեան ընտանիքներու համայն նշնեցեաց հոգեւցն ի հանդիսատէ : Սոյն ազգայինները տարւոյ ընթացքին շնորհապետ օծմանը կապած են Ս. Թարգմանաց վարժարանին :

● Եբ. 27 Յունիս. — Երեկոյեան ժամերգութիւնը, Կիրակուտեցն ու վաղուան նախատեսը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ նախագահութեամբ Գեր. Տ. Սուրբ Ս. Եպս. Գեմանեանի :

● Կիր. 28 Յունիս. — Գիւն Տիպ Ս. Առաւուծամբի : Ս. Պատարազը մատուցուեցաւ Գերթեմա-Նիկի Ս. Առաւուծամբայ Տանարին մէջ, Տիգրան Ս. Գերթեմային վրայ : ժամաբարն էր Նոգ. Տ. Լայրապետ վրդ. Արքանական : Քարոզեց Նոգ. Պատարազիչ Լայրը, ներկայացեալով Ս. Գործ իբրեւ հնազանդութեան թիպար կիրք մարդային պատմութեան մէջ : Լանդիսաւոր երթ ու դարձին կը նախագահէր Գեր. Տ. Սուրբ Ս. Եպս. Գեմանեան :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Ուր. 22 Մայիս. — Այսօր Նոգ. Տ. Լայրապետ վրդ. Արքանական արձագանքով մեկնեցաւ Կիլիկիոս եւ վերադարձաւ Եշ. 11 Յունիսին :

● Գշ. 26 Մայիս. — Կ. ա. ժամը 10ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վարչական գործերով մեկնեցաւ Նոր Երուսաղէմ և վերադարձաւ Գշ. 2 Յունիսի առաւօտեան ժամը 10ին:

● Գշ. 2 Յունիս. — Կ. ա. ժամը 9ին, Ի գիւմաց Գեր. Տեղապահ Ս. Հոր, Գեր. Տ. Սուրէն Ս. Եղս. Քէմանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրէկ Վրդ. Առլանեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Անկիթքան Եկեղեցւոյ մէջ կատարուած գահաբանական մաղթանքին, Անդրիտ Ելիզապէթ Բ. Թագուհւոյն Թագադրութեան առթիւ:

— Նոյն առթիւ, Կ. վ. ժամը 6.30ին, Անդրիտական Ընդհանուր Հնչպատոարանին մէջ տրուած ընդունելութեան, Ի պատիւ Բաղաբիւս Մուրաթըֆ Լառան էլ Բաթէպի, անոր ծրարական կուտակարութեան կողմէ Գատուոյէգէօնի շքանշանով պատուուելու առթիւ, ներկայ գտնուեցաւ Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Առլանեանի, Հոգ. Տ. Կիրէզ Արդ. Գաբիկեանի և Տիար Կարպիս Հինդլեանի:

● Եշ. 4 Յունիս. — Կ. վ. ժամը 6.30ին, Ճրարական Ընդհանուր Հնչպատոարանին մէջ տրուած ընդունելութեան, Ի պատիւ Բաղաբիւս Մուրաթըֆ Լառան էլ Բաթէպի, անոր ծրարական կուտակարութեան կողմէ Գատուոյէգէօնի շքանշանով պատուուելու առթիւ, ներկայ գտնուեցաւ Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Առլանեանի և Տիար Կարպիս Հինդլեանի:

● Եր. 6 Յունիս. — Կ. վ. ժամը 4ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը Ի գլուխ Միաբանութեան, Ս. Թ. վարժարանի գնաց կատարուելու համար բացուած վարժարանի քարեկան պաշարին:

● Գշ. 9 Յունիս. — Կ. վ. ժամը 3ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի, վանական գործերով Նոր Երուսաղէմ մեկնեցաւ և վերադարձաւ Գշ. 17 Յունիսի 1953ի Կ. վ. ժամը 3ին:

● Ուր. 12 Յունիս. — Կ. ա. ժամը 10ին, Իւլմաց Բամազանի տօնին առթիւ, Ի գիւմաց Գեր. Տեղապահ Ս. Հոր, Գեր. Տ. Սուրէն Ս. Եղս. Քէմանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչինեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, շնորհաւորութեան գնաց Բաղաբիւս Մուրաթըֆին, Ոստիկանապետին և Բաղաբապետին:

● Բշ. 15 Յունիս. — Կ. ա. ժամը 8.30ին, Գեր. Տ. Սուրէն Ս. Եղս. Քէմանեան Ի գլուխ Միաբանութեան, բացուած կատարեց ժառանգ. վարժարանի և Ընծայարանի ամսվերջի գննութեան:

● Ուր. 19 Յունիս. — Կ. ա. ժամը 8.30ին, Գեր. Տ. Նորայր Ս. Եղս. Գոպարեան Ի գլուխ Միաբանութեան, բացուած կատարեց Ս. Թ. վարժարանի ամսվերջի գննութեան:

● Եր. 20 Յունիս. — Իրիկուան ժամը 6-8, քաղաքի City Hotel բացման ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Տ. Հայրիկ և Միւռուս վարդապետներ և Տիար Կարպիս Հինդլեան:

● Գշ. 24 Յունիս. — Կ. վ. ժամը 4.30-5.30 քաղաքի St. John's Ophthalmic Hospital-ի թէյա-

տեղանին ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Ս. Եղս. Քէմանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Հայրիկ Վրդ. Ի և Զաւէն Արդ. Ի և Տիար Կարպիս Հինդլեանի:

● Եշ. 25 Յունիս. — Կ. ա. ժամը 9ին, Հոգ. Տ. Բաղդէկ Վրդ. Ապատեան, Յոպպէի Տեռուլը, ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Եր. 27 Յունիսի 1953ի Կ. վ. ժամը 3ին:

● Ուր. 26 Յունիս. — Առաւօտեան ժամը 6.30ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վանական գործերով մեկնեցաւ Ամման և վերադարձաւ Կեր. 28 Յունիսի կէսօրին:

● Եր. 27 Յունիս. — Կ. վ. ժամը 5ին, քաղաքի Y. M. C. A. ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Առլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եշ. 30 Յունիս. — Կ. վ. ժամը 4ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը նախագահեց ժառ. վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսին, վարժարանի որակին մէջ:

ԱՄՍՎԵՐՋԻ ԶԱՆԴԵՍ

ԵՒ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԵՈՒԹԻՒՆ

ԺԱՌ. ՎԱՐԺ. ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Քաղաքական շփոթ կացութեան հետևանքով 5 տարիներէ Ի վեր, ժառ. վարժարանի ամսվերջի հանդէսը կը կատարուէր անլուք կերպով: Այս տարի սակայն, ան կատարուեցաւ նախընթաց տարիներու հանդիսաւորութեամբ, Գշ. 30 Յունիսի կէսօրէ վերջ ժամը 4ին, վարժարանի որակին մէջ, նախագահութեամբ Գառ. Տեղապահ Գեր. Ս. Հոր, ներկայ էր ամբողջ Միաբանութեան ու առլիկանայ գաղութէն հրաւիրուեցաւ Կոնկի բաղմութիւնը: Լանդէսը բացուեցաւ ժառանգաւորաց քայլերով, յորմենեան տեղունեցան աններքին, խմբերգներ, զոր այնքան ձեռնհասօրէն կը վարէր ժառ. վարժարանի երաժշտութեան ուսուցիչը՝ Հոգ. Տ. Օլտկան Արեղայ, արտահանութիւններ, հայերէն, անգլիերէն և արաբերէն լեզուներով և բանասիրութիւնը Բար. Վահան Սրկ. Գալֆայանէն: Լանդէսի աւարտին, վարժարանի Տեռուլը՝ Հոգ. Տ. Հայրագուս Վրդ. Արքանանեան կորդաց վարժարանի տարեկան տեղեկագիրը, մանրամասն տեղեկութիւններ տալով ներկայեցան վարժարանի ներքին կեանքին շուրջ ու շնչաւորով անոր կատարած բարերար գերը սփիւռքի մէջ: Ապա Տեղապահ Ս. Հայրը բաժնեկի մրցանակներ իւրաքանչիւր զատարանի յաջողացոյն աշակերտներուն, ինչպէս նաև մարզական ճիւղերն և վարքի մէջ առաջին հանդիսացողներուն: Տէրութեան տօնօրէնքով Տեղապահ Սրդգանի զգալանիքով ու օրհնութեամբ փակուեցաւ մէկ ու կէս ժամ տեղաւոր հանդէսը: